Դանիել Վարուժան

Կղեոպատրա

Կյուղնոսին վրա քարավազ
Հընչեց տավիղ, հընչեց վին..
Եթովպիացի մ'ոպնիազ
Կ'երգե՝ քիթին վրա կուրին.

–“ Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ.
Արծաթ ցոուկիդ ես գերի.
Մեջրդ սիրտ մը բոցանուտ
Դափնեվարդի պես կ'այրի:

Դրշխո՛, նավակրդ բուրյան
Ունի սատափ թևճակներ՝
Որոնց ծայրեն կը տեղան
Ադամանդյա կայլակներ:

Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ
Ահա Տարսոնը գինով:
Կ'ուզե Իտալը անգութ
Շրդթայվիլ մեղկ թևերով:

Բաբի՛շ, դեմքեդ կը ցոլան
Բոցեր՝ գետի երեսին.
Լուսինն այսպես կու գա ման

Ջուրերուն վրա Նեղոսին:

Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ
Ծաղկածիծաղ ափն ի վեր.
Նուռ մ'ավասիկ կարմրակուտ
Այգիեն մեջդ է ինկեր:

Դըշխո՛, վըրադ պարզեր են
Ամպհովանի մ'ոսկեթույր,
Առջևըդ խունկ կը ծըխեն
Յոթը նաժիշտ, յոթը քույր:

Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ
Եվ օրորե թագուհին…
Մեր տակ կ'երգե ջուրն ընդփույթ
Պատմելով թովքն անդունդին:

Բամբի՛շ, ծոցիդ բուրումեն
Վիհին օձերն արթընցան.
Շուրջըդ ահա կ'արտասվեն
Մարգարիտներ մոգական:

Սահե՛, ո՛վ նավ, սահե՛ շուտ
Տարսոնն հեռուն կ'երևա.
Ջահեր կ'այրին բոցանուտ
Նիզակներուն ծայրին վրա:

Դըշխո՛, կողեն նավակին
Ներս քաշե ձեռքըդ քընքույշ.
Մատնիդ կ'իյնա խորն ալքին.
Կ'ընկըղմվի կույսըդ, ըզգո՛ւյշ:

Սահե՛, ո՛վ նավ, վիհին վրան

Բաբելոնյան կա՛խ պարտեզ՝
Ուր Շամիրամն է՝ շուշան,
Կղեոպատրան՝ վարդ մ'է վեհ:

Բամբի՛շ, գոհարը թագիդ
Եղավ Քաղքին ա՛լ փարոս:
Աչքը քեզի անքընթիթ
Հոն կը սպասե Անտոնեոս:

Սահե՛, ո՛վ նավ, շո՛ւտ սահե,
Քանի որ մեջդ է Իսիս՝
Ցընուկդ աշխարհ կը ջահե՝
Քանի որ մեջդ է մայիս:

Դըշխո՛, երկիր պագին ա՛լ
Լեգեոններն Հըռովմի:
Ըզքեզ դատող սալարն ալ
Հմայքեդ դողալ կը թվի:

Կեցի՛ր, ո՛վ նավ, շո՛ւտ կեցիր.
Ափը կ'ելլե թագուհին,
Երգս ալ կ'ըլլա ցանուցիր.
Պետք է փոխեմ լարերս հին”:

Գուսանն ա՛լ վինը չածեց.
Իսկ համբույրով մ'այն գիշեր
Կին մ'Իտալիան նըվաճեց,
Մարդ մը Բուրգերն հաղթաժեռ: